

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Գագիկ Մինասյանի, Սամվել Նիկոյանի, Գագիկ Մելիքյանի, Խոսրով Հարությունյանի, Սուքիաս Ավետիսյանի, Աղվան Վարդանյանի և Լեոնիկ Ալեքսանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրա-

AJV-07-36_2017-02-16_01d10.1d3921-17_2017-02-22_2F269

պետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-1150-17.01.2017-ՖՎ-010/0 և Պ1150¹⁴-17.01.2017-ՖՎ-010/0) փաթեթի վերաբերյալ:

I. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 13-րդ կետը երկրորդ «հաշվեքննության» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և ստուգման» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ փորձագետը ներգրավվում է ոչ միայն հաշվեքննության, այլև՝ ստուգման գործընթացին.

2) հասկացություններն անհրաժեշտ է լրացնել՝ սահմանելով նաև «հաշվեքննության օբյեկտ», «ստուգման օբյեկտ» հասկացությունները: Մասնավորապես, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 14-րդ և 15-րդ կետերով.

«14) հաշվեքննության օբյեկտ՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված մարմիններ և հիմնարկներ.

15) ստուգման օբյեկտ՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավաբանական անձ:»:

2. 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից և 2-րդ մասից հանել համապատասխանաբար «(այսուհետ՝ հաշվեքննության օբյեկտ)» և «(այսուհետ՝ ստուգման օբյեկտ)» բառերը.

2) 2-րդ մասն առաջին նախադասությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հաշվեքննիչ պալատն ստուգում չի իրականացնում այն իրավաբանական անձանց մոտ, որոնց վերապահված են պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ և դրանց իրականացումը չի ֆինանսավորվում պետական կամ համայնքային բյուջեներից:».

3) 2-րդ մասի 2-րդ կետում առաջարկում ենք «հիսուն և ավելի» բառերը փոխարինել «հիսունից ավելի» բառերով.

4) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) իրավաբանական անձին իրավական ակտով և պայմանագրով վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, եթե դրանցով նախատեսված է նման ստուգման հնարավորություն:».

5) 3-րդ մասի՝

ա. առաջին նախադասությունից հանել «և 3-րդ բառերը»,

բ. երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերում Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացնում է իր աշխատավայրում համապատասխան փաստաթղթերի հիման վրա:».

գ. երրորդ նախադասությունը «Սույն հոդվածի 2-րդ մասի» բառերից հետո լրացնել «3-րդ» բառով.

6) 5-րդ մասի 1-ին կետի «ա» պարբերության համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իրավասու է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնել տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն և սույն օրենքով սահմանված դեպքերում ընթացիկ եզրակացություններ: Մինչդեռ, 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող կարգավորմամբ նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնելը՝ հանդիսանում է ոչ թե Հաշվեքննիչ պալատի իրավունքը, այլ պարտականությունը: Այս առումով նախագիծն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին:

3. Առաջարկում ենք 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հաշվեքննիչ պալատի այլ որոշումները» բառերը փոխարինել «, ինչպես նաև սույն օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված որոշումները» բառերով.

2) 2-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի ժամկետները համապատասխանեցնել միմյանց (մասնավորապես, ինտերնետային կայքում հրապարակման մասը):

4. 16-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում առաջարկում ենք «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

2) 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր նիստի ավարտից հետո Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է պաշտոնական հաղորդում նիստում քննարկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ, որտեղ պաշտոնական հաղորդման ներկայացման ընթացակարգն առաջարկում ենք փոխարինել պաշտոնական ինտերնետային կայքում համապատասխան տեղեկատվություն տեղադրելու ընթացակարգով՝ հաշվի առնելով նաև այն, որ Հաշվեքննիչ պալատը հաղորդում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով.

3) 9-րդ մասի 12-րդ կետով Հաշվեքննիչ պալատին իրավասություն է վերապահվում քննարկել և հաստատել հաշվեքննվողների և Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների էթիկայի կանոնները, ինչը հակասում է 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39-րդ հոդվածին, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին: Առաջարկում ենք 9-րդ մասը «անդամների» բառից հետո լրացնել «և» բառով, ինչպես նաև «և հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների» բառերը հանել:

4) 10-րդ մասում առաջարկում ենք «իրականացնող անձանց» բառերից հետո լրացնել «սույն օրենքից բխող» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել հաշվեքննություն իրականացնող անձանց միայն սույն օրենքից բխող օրինական պահանջները չկատարելու դեպքում:

5) 11-րդ մասը «հաշվեքննողների» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «գործողությունների կամ անգործության» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հաշվեքննիչ պալատը լսում է ոչ թե հաշվեքննողների, այլ վերջիններիս գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները:

5. 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի չորրորդ տողում «որից» բառից հետո «նվազագույն» բառը փոխարինել «առնվազն» բառով, իսկ «5 տարվա աշխատանքային ստաժ» բառերից հետո նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«կամ հանրային ֆինանսների կառավարման ոլորտի նվազագույնը 10 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին ղեկավարի պաշտոնում:»:

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում, եթե վերջինիս պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից պակաս ժամանակահատված՝ այն չի համալրվում:»:

Պարզ չէ, թե Հաշվեքննիչ պալատի անդամի 4 կամ 5 ամսից ավելի պաշտոնավարման ժամկետի ավարտի դեպքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով տեղեկացնելու ինչպիսի ժամկետներ (ընթացակարգ) են գործելու.

3) 5-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածին, որի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Միաժամանակ այս համատեքստում անհրաժեշտ է հանել «, որը չպետք է խոչընդոտի Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունների իրականացմանը» բառերը.

4) 6-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 199-րդ հոդվածի տերմինաբանությանը.

5) 7-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես են դադարելու Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները, ինչպես նաև այն, թե ինչպես և ում կողմից է գնահատվելու դադարման հիմքերի առկայությունը (Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատի կամ հիվանդության ի հայտ գալը): Այս կապակցությամբ անհրաժեշտ է կատարել

համապատասխան փոփոխություն, որով կնախատեսվի այնպիսի ընթացակարգ, որի շրջանակներում կարձանագրվեն դադարման հիմքը և փաստը.

6) 7-րդ մասն առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«6) նրա մահվան դեպքում»:

6. Առաջարկում ենք 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնը թափուր լինելու, լիազորությունների իրականացման անհնարինության, ինչպես նաև բացակայության դեպքում Հաշվեքննիչ պալատի անդամի պարտականությունների կատարումը դնում է Հաշվեքննիչ պալատի մեկ այլ անդամի վրա»:

7. 20-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ Հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակազմի ծառայողների խրախուսման և համակարգի զարգացման ու չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք՝

1) նշված հոդվածից հանել 4-րդ մասը.

2) 5-րդ և 6-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակազմի ծառայողների խրախուսման և համակարգի զարգացման ու չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ Հայաստանի Հանրապետության տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հաշվեքննիչ պալատի համար նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի 2 տոկոսին:

6. Աուդիտորի որակավորում ունեցող Հաշվեքննիչ պալատի անդամները և աշխատակազմի ծառայողները սույն հոդվածի 5-րդ մասում նշված պահուստային ֆոնդի

միջոցների հաշվին ստանում են դրամական պարզևներ՝ օրենքով սահմանված կարգով:»:

Առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտ է խմբագրել նախագծի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 7-րդ կետում ամրագրված դրույթը:

8. 21-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասով սահմանվում է, որ հաշվեքննության գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները համալրվում են «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, իսկ աշխատակազմի այլ կառուցվածքային ստորաբաժանումները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման ընթացակարգով: Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ՆԿ-263-Ա կարգադրությամբ ստեղծվել է Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ, որն զբաղվում է քաղաքացիական ծառայության ոլորտի բարեփոխումներով, 21-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը համարում ենք ոչ նպատակահարմար և առաջարկում ենք այն խմբագրել: Այս կապակցությամբ՝ առաջարկում ենք 21-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել՝ սահմանելով, որ հաշվեքննության գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները համալրվում են, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով սահմանված կարգով.

2) 4-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը, որը նշանակվում է Հաշվեքննիչ պալատի որոշմամբ: Մինչդեռ, նախագծի 16-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսվող՝ Հաշվեքննիչ պալատի կողմից նիստում քննարկման և հաստատման ենթակա հարցերի ցանկում բացակայում է դրույթ՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարի նշանակման վերաբերյալ: Այս

առումով նշված հոդվածներն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

9. 26-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում «մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «30 օրվա ընթացքում» բառերով.

2) 8-րդ մասը խմբագրել՝ նախատեսելով, որ եթե հաշվեքննության օբյեկտը սահմանված ժամկետում չի տրամադրում գրավոր տեղեկատվություն, ապա այդ ժամկետը լրանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է ընթացիկ հաշվետվությանը և ուղարկվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն:

10. 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ՝

«Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

1) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրահանգում»:

Փաթեթում ներառված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում նշված է, որ՝

«Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

1) պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.

2) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն:»:

Անհասկանալի է, արդյոք (i) «Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը» և «Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի եզրակացությունը», ինչպես նաև (ii) «պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրահանգումը» և «պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիքը» դա նույն փաստաթղթերի տարբեր անվանումներն են թե ոչ: Եթե այո, ապա անհրաժեշտ է այդ փաստաթղթերի անվանումները ներկայացնել նույնանման տեսքով, իսկ եթե դրանք տարբեր փաստաթղթեր են, ապա նշված նախագծերից պարզ չէ, թե որն է այդ փաստաթղթերի միջև տարբերությունը:

Այդ կապակցությամբ տարընթերցումներից խուսափելու համար առաջարկում ենք՝

ա. նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասում «եզրահանգում» բառը փոխարինել «կարծիք» բառով,

բ. փաթեթում ներառված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «տարեկան հաշվետվության» բառերը:

11. 32-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք նշել հարցման հիման վրա տեղեկատվության տրամադրման համար ժամկետներ, օրինակ՝ մինչև 30 օր: Միաժամանակ նախատեսելով, որ էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով նշված ժամկետը կարող է երկարաձգվել ևս 15 օրով:

12. 39-րդ հոդված՝

- Հաշվեքննիչ պալատի գործողությունները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն նախատեսելով պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների համար, հակասության մեջ է մտնում 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխի հետ, որով պետական մարմիններին դատական պաշտպանության իրավունք վերապահված չէ:

13. 6-րդ գլխի վերնագրում «Համագործակցություն» բառը փոխարինել «փոխգործակցություն» բառով, նույն գլխի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «համագործակցում են» բառերը փոխարինել «կարող են համագործակցել» բառերով:

14. 45-րդ հոդվածում «2005 թվականի Սահմանադրության փոփոխություններով և օրենքով սահմանված ժամկետի ավարտը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ժամկետի ավարտը» բառերով:

15. 46-րդ հոդվածը լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի, քանի որ պարզ չէ, թե ինչպես կարող են աշխատակազմի ծառայողներն օրենքով մեխանիկորեն փոխել (համարվել մեկ այլ ծառայության ծառայողներ) իրենց ծառայության տեսակը: Այդ կապակցությամբ, իրավական որոշակիության սկզբունքից ելնելով, առաջարկում ենք սահմանել, որ նշված գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներով սահմանված կարգով:

16. Բացի դրանից, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

1) 1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասում «բովանդակությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «նշանակությունը» բառով,

բ. 1-ին մասի 1-ին և 8-րդ կետերից անհրաժեշտ է հանել «այլ» բառը.

2) 5-րդ հոդվածի 3-րդ մասում «օբյեկտում» բառից առաջ «(այսուհետ՝ հաշվեքննություն)» բառերն անհրաժեշտ է հանել.

3) 17-րդ հոդվածի 3-րդ մասը «ընտրվում են» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և» բառերով.

4) 24-րդ հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «այդ հարցերի» բառերը.

5) նախագծի ամբողջ տեքստում՝

ա. «կառավարություն» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը,

բ. առաջարկում ենք «խախտումներ» բառն իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ» բառերով:

II. «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ՆԿ-263-Ա կարգադրությամբ ստեղծվել է Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ, որն զբաղվում է քաղաքացիական ծառայության ոլորտի բարեփոխումներով, առաջարկում ենք «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը հանել ներկայացված օրենքների փաթեթից:

III. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է վերախմբագրել օրենքի 17-րդ հոդվածն ամբողջությամբ:

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով են կարգավորվում նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացվող Հայաստանի Հան-

րապետության կենտրոնական բանկի հաշվետվության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը և շահագրգիռ պետական այլ մարմիններին ներկայացվող Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հաստատած դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության հրապարակմանը վերաբերող դրույթները, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օրենքի 17-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ`»:

IV. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը «հատվածում» բառից հետո առաջարկում ենք լրացնել «արտաքին» բառով:

2. Նախագծի 1-ին հոդվածում «Հաշվեքննիչ պալատի մասին օրենքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

3. Նախագծի հոդվածների համարակալումն անհրաժեշտ է վերանայել` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

V. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով Հաշվեքննիչ պալատի անդամների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկի համար առաջարկում ենք սահմանել 10.00 գործակից և համապատասխանաբար խմբագրել նախագիծը:

VI. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. 1-ին հոդվածում «377» թիվն անհրաժեշտ է փոխարինել «337» թվով՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համարը:

2. Նույն հոդվածից անհրաժեշտ է հանել «իրականացրած» բառը՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթները:

VII. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել դրա բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողություններ չունենք:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վարդան Արամյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ուղղակի կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հաշվեքննիչ պալատի մասին>>, <<Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Առողջապահության գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Հատուկ քննչական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Քրեական դատավարության օրենսգրքում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային ծառայության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Քրեական դատավարության օրենսգրքում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային ծառայության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում կատարված փոփոխություններով, վերահսկողությունից հաշվեքննության անցում կատարելու, ինչպես նաև աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համահունչ բարձրագույն աուդիտորական մարմին ունենալու նպատակներով:

Նախագծերով կարգավորվող շրջանակներն ուղղակիորեն առնչվում են աուդիտորական ծառայությունների շուկայի հետ, սակայն Նախագծերի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային միջավայրի վրա *զգալի ազդեցություն* չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա *զգալի ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Քրեական դատավարության օրենսգրքում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային ծառայության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվում է վերահսկիչ գործառույթ իրականացնող մարմնից (ՀՀ վերահսկիչ պալատ) անցնել հաշվեքննիչ գործառույթ իրականացնող մարմնի (ՀՀ հաշվեքննիչ պալատ)՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված նորմերի համաձայն:

Միևնույն ժամանակ, Նախագծով առաջարկվում է սահմանել դրույթ, համաձայն որի պետական հատվածում աուդիտը կկոչվի հաշվեքննություն, որը կկարգավորվի «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է չեզոք ազդեցություն:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հաշվեքննիչ պալատի մասին», «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» «Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

ՀՀ օրենքների վերոնշյալ նախագծերն (բացառությամբ՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի նախագծի)՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունվելու կամ չընդունվելու դեպքում ՀՀ համայնքների բյուջեների ելքերի փոփոխմանը չի հանգեցնում, իսկ ՀՀ պետական բյուջեի ելքերի մասով, նախագծի առանձին դրույթների ընդունումը, մասնավորապես՝ Հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակազմի ծառայողների խրախուսման և համակարգի զարգացման նպատակային ֆոնդի ձևավորման (20-րդ հոդված, 4-րդ մաս)՝ նշված ֆոնդի ձևավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողների և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների առնվազն 3 տարին մեկ անգամ վերապատրաստման (22-րդ հոդված, 2-րդ մաս), Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ պալատի աշխատակազմում որակի կառավարման համակարգի ստեղծման (23-րդ հոդված, 2-րդ մաս) վերաբերյալ, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատին վերապահված գործառույթների և լիազորությունների շրջանակի փոփոխության հետ կապված, կարող է առաջացնել ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն, որը գնահատել հնարավոր չէ համապատասխան տվյալների բացակայության պատճառով:

ՀՀ օրենքների մյուս նախագծերն ընդունվելու կամ չընդունվելու դեպքում ՀՀ պետական և համայնքների բյուջեների ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Միաժամանակ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և դրան կից այլ օրենքների նախագծերի ընդունումը կարող է հանգեցնել պետական բյուջեի եկամուտների փոփոխության:

Պ-1150-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՇՎԵՔՆԵՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները սույն օրենքի իմաստով ունեն հետեւյալ բովանդակությունը.

1) արտաքին պետական հաշվեքննություն (այսուհետ՝ հաշվեքննություն)՝ հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշների եւ պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է հաշվեքննության առարկայի իրականացման համար իրավական ակտերով, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո:

2) հաշվեքննության առարկա՝ հաշվեքննության օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

3) ֆինանսատնտեսական գործունեություն՝ հանրային ֆինանսների եւ սեփականության ոլորտում պետական եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների եւ վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործում.

4) ծրագրային կետ՝ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի (այսուհետ՝ գործունեության ծրագիր) 1-ին եւ 2-րդ մասերի միավորն է, որում նշվում են հաշվեքննության օբյեկտը, առարկան, հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումը.

5) հաշվեքննության առաջադրանք՝ հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում է ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, հաշվեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք այդ թվում՝ հաշվեքննողները ու փորձագետները եւ մասնագետները.

6) հաշվեքննության տեսակներ՝ ֆինանսական, համապատասխանության, կատարողականի.

7) հաշվեքննության ընթացակարգեր՝ զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ եւ վերակատարում:

8) ստուգում՝ ստուգման առարկան կարգավորող իրավական ակտերով եւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշների եւ պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է ստուգման առարկայի իրականացման համար իրավական ակտերով եւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո: Ստուգումն կատարվում է հաշվեքննության օբյեկտին առնչվող իրավաբանական անձանց մոտ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում, հաշվեքննության տեսակներով ու զննման, դիտարկման, հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի եւ վերակատարման ընթացակարգերով.

9) ստուգման առարկա՝ ստուգման օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

10) ստուգման առաջադրանք՝ հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում է ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտին առնչվող ստուգման
AJV-07-36_2017-02-16_01d10.1d3921-17_2017-02-22_2F269

օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, ստուգումն իրականացնող ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք այդ թվում՝ հաշվեքննողները ու փորձագետները եւ մասնագետները.

11) հաշվեքննող՝ հաշվեքննություն, ստուգում իրականացնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայող

12) մասնագետ՝ պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացին ներգրավվող համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ.

13) փորձագետ՝ պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացին ներգրավվող հաշվեքննության վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ.

Հոդված 2. Հաշվեքննիչ պալատի կարգավիճակը

1. Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:

2. Հաշվեքննիչ պալատի նստավայրը Երեւան քաղաքն է:

Հոդված 3. Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը

1. Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների եւ սեփականության ոլորտում պետական եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների եւ վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման օրինականության եւ արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին եւ հանրությանը ժամանակին, մասնագիտական եւ անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Հոդված 4. Հաշվեքննիչ պալատի գործառույթները

1. Սույն օրենքով սահմանված հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակի ապահովման համար հաշվեքննիչ պալատը իրականացնում է հետեւյալ գործառույթները՝

1) Հանրային ֆինանսների եւ սեփականության ոլորտում հաշվեքննության իրականացում պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման օրինականության եւ արդյունավետության նկատմամբ.

2) Սույն մասի 1-ին կետում նշված հաշվեքննության շրջանակներում սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում ստուգման կատարում:

Հոդված 5. Հաշվեքննիչ պալատի լիազորությունները

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ հիմնարկներում (այսուհետ՝ հաշվեքննության օբյեկտ): Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն չի իրականացնում պետական եւ համայնքային բյուջեների միջոցներից չֆինանսավորվող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ հիմնարկներում:

2. Հաշվեքննիչ պալատը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվեքննության շրջանակում ստուգում է իրականացնում իրավաբանական անձի (այսուհետ՝ ստուգման օբյեկտ) մոտ, եթե՝

1) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից,

2) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի հիսուն եւ ավելի տոկոսը պետական կամ համայնքային մասնակցությամբ է,

3) իրավաբանական անձին՝ իրավական ակտով, պայմանագրով, վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային միջոցների հաշվին՝ միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի, պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար,

4) իրավաբանական անձը պայմանագրով ստացել է պետական բյուջեից վարկեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական երաշխիքով ապահովված վարկեր կամ այլ ֆինանսական միջոցներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն,

5) իրավաբանական անձը պայմանագրով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կողմից ստացել է դրամաշնորհներ եւ սուբսիդիաներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն:

3. Սույն հոդվածի 1-ին մասով եւ 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատը իրավասու է համապատասխանաբար հաշվեքննություն, ստուգում (այսուհետ՝ հաշվեքննություն) իրականացնել ինչպես հաշվեքննության, ստուգման (այսուհետ՝ հաշվեքննության) օբյեկտում, այնպես էլ հաշվեքննիչ պալատի աշխատավայրում: Սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ եւ 5-րդ կետերով սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատը իրականացնում է փաստաթղթային հաշվեքննություն՝ հաշվեքննիչ պալատի աշխատավայրում: Սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ եւ 5-րդ կետերով նախատեսված իրավաբանական անձանցից Հաշվեքննիչ պալատը իրավասու է փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջել միայն այն դեպքում, երբ դրանք հասանելի չեն դառնում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

4. Հաշվեքննության ընթացքում հանցագործության ակնհայտ հատկանիշների կասկած ի հայտ գալու դեպքում հաշվեքննիչ պալատի որոշմամբ համապատասխան նյութերը անհապաղ ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն: Այդ մասով հաշվեքննիչ պալատը դադարեցնում է հաշվեքննությունը: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը տրամադրված նյութերի հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ՝ գրավոր տեղեկացնում է հաշվեքննիչ պալատին:

5. Հաշվեքննիչ պալատը իրավասու է՝

1) Ազգային ժողով ներկայացնել՝

ա. տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ.

բ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն.

գ. սույն օրենքով սահմանված դեպքերում ընթացիկ եզրակացություններ:

2) ուսումնասիրել իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

Հոդված 6. Միջազգային համագործակցությունը

1. Հաշվեքննիչ պալատը՝ հաշվեքննության մեթոդաբանության եւ դրա իրականացման առաջավոր փորձի փոխանակման նպատակով համագործակցում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող բարձրագույն աուդիտորական մարմինների եւ նրանց միջազգային կազմակերպությունների հետ:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Հողված 7. Հաշվեքննիչ պալատի գործառնության անկախության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է հաշվեքննության ենթակա մարմիններից եւ կազմակերպություններից:

Հողված 8. Հաշվեքննիչ պալատի ֆինանսական անկախության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատի ծախսերը հանդիսանում են պետական բյուջեի ծախսերի բաղկացուցիչ մաս:

2. Հաշվեքննիչ պալատի ֆինանսավորումը պետք է ապահովի հաշվեքննիչ պալատին վերապահված գործառնությունների իրականացումը:

Հողված 9. Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտները

1. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:

Հողված 10. Մասնագիտական կարողությունների ապահովման եւ շարունակական զարգացման սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատը սահմանում է չափորոշիչներ հաշվեքննիչ պալատի աշխատակազմում աշխատանքի ընդունվողների համար, ինչպես նաեւ հաստատում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը:

Հողված 11. Կոլեգիալության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատն կոլեգիալ մարմին է:

Հողված 12. Օբյեկտիվության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության ողջ գործընթացը իրականացվում է օբյեկտիվ՝ փաստերի հետազոտման, վերլուծության ու եզրահանգման միջոցով:

Հողված 13. Քաղաքական չեզոքության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատի անդամը չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

2. Հաշվեքննիչ պալատը քաղաքական իրադարձություններին եւ նպատակներին գնահատական չի տալիս: Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված խախտումների վերաբերյալ իրավական գնահատական չի տալիս եւ խախտումների հետեւանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

3. Հաշվեքննիչ պալատի անդամը հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն:

Հողված 14. Հաշվեքննիչ պալատի գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը (այսուհետ՝ գործունեության ծրագիր), ինչպես նաեւ գործունեության ծրագրի փոփոխության եւ (կամ) լրացման վերաբերյալ հիմնավոր պատճառաբանված որոշումը, գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ընթացիկ եզրակացությունները, հաշվեքննիչ պալատի այլ որոշումները բացառությամբ անհատական իրավական ակտերի, պետական բյուջեով հաշվեքննիչ պալատի գծով նախատեսված տարեկան ծախսերի նախահաշիվները, ֆինանսական հաշվետվությունները, ֆինանսական գործունեության վերաբերյալ արտաքին

աուդիտորական կազմակերպության եզրակացությունը, ենթակա են հրապարակման՝ բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաթղթերը հրապարակվում են ընդունվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հաշվեքննիչ պալատի պաշտոնական եւ www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄԸ, ՆԻՍՏԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Հոդված 15. Հաշվեքննիչ պալատի կազմը

1. Հաշվեքննիչ պալատը կազմված է յոթ անդամից՝ հաշվեքննիչ պալատի նախագահից եւ 6 անդամից:

Հոդված 16. Հաշվեքննիչ պալատի նիստերը

1. Հաշվեքննիչ պալատը իր գործունեությունը կազմակերպում է հերթական եւ արտահերթ նիստերի (այսուհետ՝ նիստ) միջոցով: Հերթական նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ՝ հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից: Արտահերթ նիստ հրավիրվում է, հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամի նախաձեռնությամբ:

2. Նիստերի օրակարգը հրապարակվում է նիստի անցկացումից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Նիստերը նախագահում է հաշվեքննիչ պալատի նախագահը:

4. Նիստը իրավագոր է, եթե նիստին մասնակցում է հաշվեքննիչ պալատի առնվազն չորս անդամ:

5. Նիստում որոշումները ընդունվում են քվեարկությամբ առնվազն չորս կողմ ձայնի առկայության դեպքում:

6. Հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամ քվեարկում է անձամբ, ունի մեկ ձայն եւ քվեարկում է կողմ կամ դեմ:

7. Հաշվեքննիչ պալատի որոշումները ստորագրում է նիստը նախագահողը: Որոշման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի անդամի կողմից հատուկ կարծիքի առկայության դեպքում կարծիքը կցվում է որոշմանը:

8. Նիստերը արձանագրվում են հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով: Արձանագրությունները ստորագրում է նիստը նախագահողը: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո հաշվեքննիչ պալատը ներկայացնում է պաշտոնական հաղորդում՝ նիստում քննարկված հարցերի եւ ընդունված որոշումների վերաբերյալ:

9. Հաշվեքննիչ պալատը իր նիստում քննարկում եւ հաստատում է՝

1) գործունեության ծրագիրը.

2) գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող դիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը.

3) գործունեության ծրագրում փոփոխությունը եւ (կամ) լրացումը.

4) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը.

5) ընթացիկ եզրակացությունները.

6) հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը.

7) հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտը, ծախսերի նախահաշիվը եւ վերջինիս կատարողականը, սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նշված հաշվեքննիչ պալատի անդամի եւ աշխատակազմի ծառայողի խրախուսման եւ (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդից եւ 5-րդ մասով նշված պահուստային ֆոնդից ծախսերի կատարման վերաբերյալ որոշումները.

8) հաշվեքննության առաջադրանքը.

9) հաշվեքննիչ պալատի ներքին իրավական ակտերը եւ դրանցում փոփոխությունները եւ լրացումները.

10) հաշվեքննիչ պալատի կանոնակարգը.

11) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությունը.

12) հաշվեքննության իրականացման մեթոդաբանությունը եւ ուղեցույցները, հաշվեքննիչ պալատի անդամների, հաշվեքննողների եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների էթիկայի կանոնները եւ որակի կառավարման համակարգի գործառույթի իրականացման մեթոդաբանությունը.

13) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների սույն օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան պաշտոնի անձնագրերը.

14) հաշվեքննիչ պալատի աշխատանքներում մասնագետների եւ փորձագետների ներգրավման կարգը.

15) հաշվեքննիչ պալատի անդամների, ինչպես նաեւ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջեւ աշխատանքների պարբերական վերաբաշխումը:

10. Հաշվեքննիչ պալատը, հաշվեքննության ընթացքում կամ արդյունքում, կարող է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, ինչպես նաեւ վերադաս ունենալու ղեկավար վերադասին առաջարկել օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց, եթե վերջիններս չեն կատարում սույն օրենքի եւ հաշվեքննություն իրականացնող անձանց օրինական պահանջները:

11. Հաշվեքննիչ պալատը լսում է հաշվեքննողների դեմ բերված բողոքները եւ բավարար հիմքերի առկայության դեպքում ձեռնարկում միջոցներ պատասխանատվություն կիրառելու համար:

12. Յուրաքանչյուր տարի հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաստատվում է հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող աշխատակազմի ծառայողների հաջորդ տարվա մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը, որն իրականացվում է ինչպես ներքին կարողությունների օգատգործմամբ, այնպես էլ այլ կառույցներում վերապատրաստման միջոցով:

Հոդված 17. Հաշվեքննիչ պալատի անդամը

1. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ պալատի նախագահ, կարող է ընտրվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն եւ աուդիտորի որակավորում ունեցող այն քաղաքացին, ով ունի աուդիտորի նվազագույնը 5 տարվա աշխատանքային ստաժ, որից նվազագույնը 1 տարին աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ, կամ հաշվեքննիչ պալատի անդամի նվազագույնը 3 տարվա աշխատանքային ստաժ, կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմում գլխավոր պաշտոնների 1-ին խմբի նվազագույնը 5 տարվա աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի նվազագույնը 10 տարվա աշխատանքային ստաժ, որից նվազագույնը հինգ տարին՝ նվազագույնը ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

2. Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ հաշվեքննիչ պալատի նախագահը այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողով: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում, եթե պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է 6 ամսից ավել ժամանակահատված, հաշվեքննիչ պալատը այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողով: Այս դեպքում հաշվեքննիչ պալատի նոր անդամն ընտրվում է նախկին անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով:

3. Հաշվեքննիչ պալատի նախագահը եւ մյուս անդամները ընտրվում են ԱԺ կանոնակարգով սահմանված կարգով:

4. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ պալատի նախագահ չի կարող ընտրվել այն անձը, ով՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ենթարկվել է քրեական պատասխանատվության, եւ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ

3) օրենքով սահմանված կարգով գրկված է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

5. Հաշվեքննիչ պալատի անդամները, ներառյալ պալատի նախագահը, չեն կարող առաջադրվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, զբաղեցնել պաշտոն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից, որը չպետք է խոչընդոտի հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունների իրականացմանը:

6. Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով դադարեցնում է հաշվեքննիչ պալատի անդամների այդ թվում նախագահի լիազորությունները սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջի խախտման, ինչպես նաեւ հաշվեքննիչ պալատի անդամի որեւէ կուսակցության անդամ լինելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու եւ հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չպահպանելու դեպքում.

7. Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարում են՝

1) պաշտոնավարման ժամկետի լրանալու դեպքում.

2) հաշվեքննիչ պալատի անդամի հանցագործության կատարման համար դատապարտվելու կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի (վճռի) հիման վրա.

3) եթե ի հայտ է եկել հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որոնց ցանկը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների եւ հիվանդությունների ցանկին.

4) հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի դեպքում.

5) հաշվեքննիչ պալատի անդամի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

8. Հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի մասին դիմումը ներկայացվում է Ազգային ժողովի Նախագահին, ինչի մասին տեղեկացվում է հաշվեքննիչ պալատ. այդ տեղեկությունը տեղադրվում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հոդված 18. Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները

1. Հաշվեքննիչ պալատի անդամը՝ այդ թվում՝ հաշվեքննիչ պալատի նախագահը
AJV-07-36_2017-02-16_01d10.1d3921-17_2017-02-22_2F269

1) համակարգում է հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներից մեկի կամ մի քանիսի աշխատանքները,

2) ապահովում է իր համակարգման ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով հաշվեքննության իրականացումը օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգին համապատասխան.

3) սույն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում որոշում է իր համակարգման ներքո գտնվող հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպման հարցերը եւ այդ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունքների համար հաշվեքննիչ պալատի առջեւ կրում է պատասխանատվություն.

4) իր համակարգման ներքո գտնվող կառուցվածքային ստորաբաժանումներում ձեւավորում է հաշվեքննություն իրականացնող հաշվեքննողների աշխատանքային խմբեր.

5) ստորագրում եւ հաշվեքննիչ պալատի հաստատմանն է ներկայացնում իր համակարգման ներքո հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների հաշվեքննության առաջադրանքների եւ ընթացիկ եզրակացությունների նախագծերը.

6) կատարում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ սահմանված հանձնարարություններ.

7) ներկայացնում է հաշվեքննիչ պալատը իր լիազորությունների շրջանակում:

Հոդված 19. Հաշվեքննիչ պալատի նախագահը

1. Հաշվեքննիչ պալատի նախագահը՝

1) ապահովում է հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությունը,

2) օրենքով սահմանված կարգով իր լիազորությունների շրջանակներում աշխատանքի է ընդունում եւ աշխատանքից ազատում հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին,

3) իր լիազորությունների շրջանակներում արձակում է հրամաններ,

4) ներկայացնում է հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում,

5) հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնը թափուր լինելու, լիազորությունների իրականացման անհնարինության դեպքում հաշվեքննիչ պալատի անդամի պարտականությունների կատարումը, ինչպես նաեւ նրա բացակայության դեպքում փոխարինումը դնում է հաշվեքննիչ պալատի մեկ այլ անդամի վրա:

2. Հաշվեքննիչ պալատի նախագահը հաշվեքննիչ պալատի անդամներից մեկի վրա նախապես դնում է իր բացակայության ժամանակ իրեն փոխարինելու պարտականությունը: Հաշվեքննիչ պալատի նախագահին փոխարինողի բացակայության դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահին փոխարինում է հաշվեքննիչ պալատի անդամի առավել երկար ստաժ ունեցող անդամը:

Հոդված 20. Հաշվեքննիչ պալատի գործունեության երաշխիքները

1. Հաշվեքննիչ պալատը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում եւ հաշվեքննիչ պալատի կանոնակարգին համապատասխան յուրաքանչյուր տարի կազմում ու Կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (հաշվեքննիչ պալատի ծախսերի նախահաշվի նախագիծը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

2. Հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում անփոփոխ, իսկ առարկության դեպքում փոփոխված ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: Կառավարությունը հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտը պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացնում է Ազգային ժողով:

3. Կառավարությունը Ազգային ժողով եւ հաշվեքննիչ պալատ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ իր փոփոխությունների հիմնավորումը:

4. Պետական բյուջեով հաշվեքննիչ պալատի գծով նախատեսված տարեկան ծախսերի նախահաշիվները ներառում է հաշվեքննիչ պալատի անդամների եւ աշխատակազմի ծառայողների խրախուսման եւ համակարգի զարգացման նպատակային ֆոնդ:

5. Հաշվեքննիչ պալատի անդամների եւ աշխատակազմի ծառայողների խրախուսման եւ համակարգի զարգացման ու չնախատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաշվեքննիչ պալատի համար նախատեսված ծախսերի (առանց աշխատակիցների խրախուսման եւ համակարգի զարգացման նպատակային ֆոնդի գծով ծախսերի) ընդհանուր գումարի 2 տոկոսին:

6. Աուդիտորի որակավորում ունեցող հաշվեքննիչ պալատի անդամները եւ աշխատակազմի ծառայողները հաշվեքննիչ պալատի անդամների եւ աշխատակազմի ծառայողների խրախուսման եւ համակարգի զարգացման նպատակային ֆոնդի միջոցների հաշվին ստանում են դրամական պարգեւներ՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 21. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարչական հիմնարկ է, որը գործում է սույն օրենքով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով: Հիմնարկի հիմնադրի լիազորությունները Հայաստանի Հանրապետության անունից իրականացնում է հաշվեքննիչ պալատը:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում գործում են հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները համալրվում են «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի այլ կառուցվածքային ստորաբաժանումները համալրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայությունում թափուր պաշտոնների համալրման ընթացակարգով:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը, որը նշանակվում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ:

Հոդված 22. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող ծառայողներին ներկայացվող պահանջները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող ծառայողների պաշտոնների անձնագրերում պետք է ներառվեն նաեւ առնվազն հետեւյալ պահանջները՝

1) հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար՝ աուդիտորի որակավորում եւ աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն

իրականացնող եւ դրանց հավասարեցված ստորաբաժանման գլխավոր պաշտոնների նվազագույնը 5 տարվա աշխատանքային ստաժ,

2) հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ՝ աուդիտորի որակավորում եւ աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող եւ դրանց հավասարեցված ստորաբաժանման գլխավոր պաշտոնների նվազագույնը 4 տարվա աշխատանքային ստաժ:

2. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողները եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողները առնվազն 3 տարին մեկ անգամ անցնում են վերապատրաստում՝ հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագրով սահմանված կարգով:

Հոդված 23. Հաշվեքննիչ պալատի որակի կառավարման համակարգը եւ արտաքին աուդիտը

1. Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը իրականացնում է օրինականության եւ տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքներին համաձայն:

2. Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության եւ կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ստեղծվում է որակի կառավարման համակարգ:

3. Հաշվեքննիչ պալատի ֆինանսական գործունեությունը ենթակա է ամենամյա արտաքին աուդիտի՝ մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից:

4. Հաշվեքննիչ պալատի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Ազգայի ժողովի աշխատակազմը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 24. Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությունը

1. Հաշվեքննիչ պալատի գործունեության ներքին ընթացակարգը, հաշվեքննության կազմակերպման եւ իրականացման ներքին ընթացակարգերը, ինչպես նաեւ գործունեության ծրագրի, գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության եւ ընթացիկ եզրակացության ձեւանմուշերը սահմանվում են հաշվեքննիչ պալատի կանոնակարգով: Կանոնակարգով մասնավորապես սահմանվում է հաշվեքննիչ պալատի անդամների, ինչպես նաեւ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջեւ աշխատանքի պարբերական վերաբաշխման սկզբունքը՝

ա. հաշվեքննիչ պալատի անդամը վեց տարվա ընթացքում՝ առավելագույնը երկու տարի կարող է համակարգել հաշվեքննություն իրականացնող նույն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները՝ բացառությամբ սույն մասի դ. ենթակետով սահմանված դեպքի,

բ. հաշվեքննիչ պալատի անդամը վեց տարվա ընթացքում՝ առավելագույնը երկու տարի կարող է համակարգել միեւնույն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված գործունեության ոլորտում հաշվեքննություն իրականացնող որեւէ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները՝ բացառությամբ սույն մասի դ. ենթակետով սահմանված դեպքի,

գ. հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող նույն կառուցվածքային ստորաբաժանումը վեց տարվա ընթացքում առավելագույնը երկու տարի կարող է միեւնույն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված գործունեության ոլորտում հաշվեքննություն իրականացնել՝ բացառությամբ սույն մասի դ. ենթակետով սահմանված դեպքի,

դ. հաշվեքննությունը հաջորդ տարում շարունակվելու դեպքում այն իրականացնում են դրանք սկսած հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը եւ հաշվեքննիչ պալատի անդամը:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջեւ պարտականությունների բաշխումը, այդ հարցերի կազմակերպման եւ իրականացման կարգը հաստատվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 25. Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը

1. Յուրաքանչյուր տարի հաշվեքննիչ պալատը հաստատում է գործունեության ծրագիրը մեկ տարվա համար՝ հաշվեքննիչ պալատի նախորդ գործունեության ծրագրի ավարտման ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

2. Գործունեության ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

- 1) պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների եւ տարեկան կատարման հաշվեքննություն,
- 2) հաշվեքննություն՝ ըստ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ կազմված հաշվեքննության առարկայի, հաշվեքննվող օբյեկտի, հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման,
- 3) հաշվեքննիչ պալատի ներքին գործընթացների ծրագիր՝ հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման, որակի կառավարման համակարգին, անձնակազմի կառավարմանն ու վերապատրաստմանն, միջազգային համագործակցությանն եւ սույն օրենքով հաշվեքննիչ պալատին վերապահված այլ հարցեր:

3. Հաշվեքննիչ պալատն իրավասու է գործունեության ծրագրի 2-րդ մասում իրականացնել հիմնավոր պատճառաբանված փոփոխություն եւ (կամ) լրացում՝ գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ: Դրա վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

4. Գործունեության ծրագրի 1-ին եւ 2-րդ մասով նախատեսված ծրագրային կետի կատարումը տվյալ տարում չավարտվելու դեպքում տեղափոխվում է հաջորդ տարի:

Հոդված 26. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունը

1. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը հաշվեքննության ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ընթացիկ եզրակացության նախագիծը ներկայացնում է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը համակարգող հաշվեքննիչ պալատի անդամին՝ ստորագրման:

2. Ընթացիկ եզրակացության նախագիծը հաշվեքննիչ պալատի անդամի կողմից ստորագրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հաշվեքննիչ պալատի հաստատմանը: Ընթացիկ եզրակացության նախագծի հետ միասին պալատ է ներկայացվում նաեւ վերջինիս կազմման համար հիմք հանդիսացող հաշվեքննության արձանագրությունները ու դրանց վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի առարկությունները եւ բացատրությունները:

3. Ընթացիկ եզրակացության վերաբերյալ հաշվեքննիչ պալատը որոշում է կայացնում դրա նախագիծը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

4. Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց եւ ինը ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները, համապատասխանաբար այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո 4 ամսվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողով:

5. Գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունն ըստ անհրաժեշտության ներառում է՝

1) գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին,

2) գրառում՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ,

3) առաջարկություններ՝ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը եւ այլ շահագրգիռ կողմերին,

4) հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների ղեկավարների ներկայացրած առարկությունները եւ բացատրությունները,

5) եզրակացություններ,

6) այլ տեղեկատվություն:

6. Հաշվեքննիչ պալատը գործունեության ծրագրի 2-րդ մասում ընդգրկված ծրագրային կետի հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը հաստատվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման եւ ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

7. Հաշվեքննիչ պալատն սույն հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը եւ ներկայացնում Ազգային ժողով եւ Կառավարություն:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման պահանջի խախտման դեպքում հաշվեքննիչ պալատը դրա վերաբերյալ տեղեկատվությունը կցում է ընթացիկ եզրակացությանը եւ ուղարկում է Ազգային ժողով եւ Կառավարություն:

Հոդված 27. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը

1. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմվում է հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննության միջոցով՝ օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց եւ ինը ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները:

2. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը բաղկացած է հետեւյալ մասերից՝

1) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաեւ առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրահանգում, որն, ըստ անհրաժեշտության, ներառում է՝

ա. դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար եւ էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել.

բ. ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետեւանքները համատարած չեն եւ հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետեւանքները համատարած չեն եւ անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

գ. բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետեւանքները համատարած են եւ հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,

դ. հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետեւանքները համատարած են եւ անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

3. Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը Ազգային ժողով է ներկայացնում կառավարության կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը Ազգային ժողով ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 28. Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը

1. Տարեկան հաղորդումը բաղկացած է երեք մասից՝

1) պետական բյուջեի կատարողականի հաշվեքննության հետ կապված նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին ամփոփ տեղեկատվություն:

2) ամփոփ տեղեկատվություն գործունեության ծրագրի 2-րդ մասում ընդգրկված ծրագրային կետերի կատարման վերաբերյալ:

3) նախորդ տարվա ընթացքում գործունեության ծրագրի 3-րդ մասի իրականացման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի տեղեկատվությունը եւ արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից տրված եզրակացությունը:

2. Տարեկան հաղորդման 2-րդ մասում ներառվում է միայն այն ծրագրային կետերի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, որոնց մասով ընթացիկ եզրակացությունը, սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կամ 8-րդ մասերով սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով տարեկան հաղորդումը Ազգային ժողով՝ ուղարկվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

3. Հաշվեքննիչ պալատը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ հունիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը:

Հոդված 29. Հաշվեքննությունների վերլուծությունների արդյունքների հրապարակայնացումը

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության արդյունքների վերլուծության հիման վրա քննարկում է խախտումների պատճառներն, որի արդյունքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին կարող է ներկայացնել առաջարկություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի փոփոխման եւ (կամ) լրացման վերաբերյալ:

2. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության արդյունքների վերլուծության հիման վրա կարող է առաջարկություններ ներկայացնել նաեւ բյուջետային ծրագրերում նկարագրված ոչ ֆինանսական չափորոշիչների բարելավման վերաբերյալ:

3. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունների վերլուծության արդյունքում պարզում է հաճախ հանդիպող խախտումները եւ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ինտերնետային կայքերում տեղադրելու, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակելու կամ սեմինարներ կազմակերպելու միջոցով, աշխատանքներ է իրականացնում հետագայում այդ խախտումների կանխարգելման եւ բացառման համար:

4. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունների վերլուծության արդյունքում պարզում է օրինական եւ արդունավետ կառավարման դրսեւորումները եւ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ինտերնետային կայքերում տեղադրելու, զանգվածային լրատվության միջոցներում

հրապարակելու կամ սեմինարներ կազմակերպելու միջոցով աշխատանքներ է իրականացնում դրանց հաղորդակցման եւ քարոզչության համար:

Հոդված 30. Հաշվեքննիչ պալատի կողմից տեղեկատվության տրամադրման կարգը

1. Հաշվեքննիչ պալատը գործունեության ծրագիրը, ընթացիկ եզրակացությունները, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը եւ իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով եւ Կառավարություն, միաժամանակ դրանք տեղադրում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Մինչեւ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելը, հաշվեքննիչ պալատի անդամներին, հաշվեքննողներին, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին, ներգրավված մասնագետներին ու փորձագետներին եւ հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց արգելվում է հաշվեքննության վերաբերյալ որեւէ ձեռով նախնական գնահատականների եւ եզրակացությունների հրապարակումը:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 31. Հաշվեքննության նպատակը

1. Հաշվեքննության նպատակն է պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային եւ ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

2. Հաշվեքննության իրականացմամբ հաշվեքննիչ պալատը ուսումնասիրում է հաշվեքննության օբյեկտի ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը: Ներքին աուդիտի համակարգը արդյունավետ գնահատելու դեպքում՝ հաշվեքննիչ պալատը կարող է հիմնվել վերջինիս արձանագրած արդյունքների վրա:

Հոդված 32. Հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը

1. Հաշվեքննիչ պալատին առցանց հասանելի են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվեքննության օբյեկտներին պատկանող պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցներին, ստացված փոխառություններին ու վարկերին, պետական եւ համայնքային սեփականության օգտագործմանն առնչվող էլեկտրոնային շտեմարանները, բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության:

2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված հաշվեքննության օբյեկտներին պատկանող պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցներին, ստացված փոխառություններին ու վարկերին, պետական եւ համայնքային սեփականության օգտագործմանն առնչվող տեղեկատվության առցանց տրամադրման անհնարինության դեպքում, այն Հաշվեքննիչ պալատին տրամադրվում է Հաշվեքննիչ պալատի հարցման հիման վրա էլեկտրոնային կամ թղթային տարբերակով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 33. Հաշվեքննության տեսակները, սկզբունքները եւ ընթացակարգերը

1. Հաշվեքննության տեսակներն են՝

1) ֆինանսական հաշվեքննություն՝ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառություններին ու վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման ֆինանսական փաստաթղթերի վարման պահանջների կատարումը եւ դրա արդյունքում ձեւավորված հաշվետվությունների արժանահավատությունը:

2) համապատասխանության հաշվեքննություն՝ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների

միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանականերում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին եւ պահանջներին.

3) կատարողականի հաշվեքննություն՝ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման տնտեսող, նպատակային եւ ծախսային արդյունավետ լինելը.

2. Կատարողականի հաշվեքննության սկզբունքները

1) տնտեսում՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում է թե ինչքանով է նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռքբերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ եւ համարժեք հատուցմամբ:

2) նպատակային արդյունավետություն (արդյունավետություն)՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում է սահմանված նպատակների իրականացումը եւ պլանավորված արդյունքների ստացումը.

3) ծախսային արդյունավետություն (օգտավետություն)՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով եւ ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը.

3. Հաշվեքննության ընթացակարգերը

1) գնում՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որը նախատեսում է հաշվեքննության առարկայի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային եղանակով ներկայացված փաստաթղթերի եւ գրանցումների ինչպես նաեւ ակտիվների, կատարված աշխատանքի, մատուցված ծառայության եւ մատակարարված ապրանքի փաստացի վիճակի ուսումնասիրություն.

2) դիտարկում՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որը նախատեսում է հաշվեքննության օբյեկտում ականատես լինել հաշվեքննության օբյեկտի պատասխանատու անձանց կողմից հաշվեքննության առարկային վերաբերվող գործընթացի կամ ընթացակարգի կատարմանը.

3) հարցում՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որով հաշվեքննության օբյեկտի պատասխանատու անձանց գրավոր եւ բանավոր կարգով ներկայացվում է տեղեկատվության ստացման պահանջ.

4) արտաքին հաստատում՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որը նախատեսում է սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացում՝ որպես հաշվեքննիչ պալատի հարցման պատասխան.

5) վերլուծական ընթացակարգ՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որով ֆինանսական եւ ոչ ֆինանսական ցուցանիշները գնահատվում են իրենց հետ փոխկապակցված այլ տվյալների համեմատման եւ համադրման միջոցով.

6) վերահաշվարկ՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որը նախատեսում է ելակետային տվյալների հիման վրա հաշվարկի ճշտության պարզում.

7) վերակատարում՝ հաշվեքննության իրականացման ընթացակարգ, որով հաշվեքննողները վերարտադրում են հաշվեքննության օբյեկտի հսկողության գործընթացները

4. Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում ազատ է հաշվեքննության տեսակի եւ ընթացակարգի ընտրության հարցում, բացառությամբ, եթե սույն օրենքով սահմանված է տվյալ հաշվեքննության առարկայի համար հաշվեքննության որոշակի տեսակ կամ ընթացակարգ:

Հողված 34. Հաշվեքննության իրականացման կարգը

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունը կազմակերպում եւ իրականացնում է սույն օրենքի պահանջներին համապատասխան: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում ու հիմնարկներում իրականացվող հաշվեքննության արդյունքում կազմվում է եզրակացություն կամ ընթացիկ եզրակացություն: Իրավաբանական անձանց մոտ իրականացվող հաշվեքննության արդյունքում կազմվում է հաշվեքննության արձանագրություն:

2. Հաշվեքննությունը իրականացվում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա:

3. Հաշվեքննության առաջադրանքի նախագիծը կազմում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը եւ ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները համակարգող հաշվեքննիչ պալատի անդամին՝ ստորագրության: Կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները համակարգող հաշվեքննիչ պալատի անդամը հաշվեքննության առաջադրանքի նախագիծը ներկայացնում է հաշվեքննիչ պալատի հաստատմանը:

4. Հաշվեքննիչ պալատը գործունեության ծրագրի 2-րդ մասի ծրագրային կետի կատարումը սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ, իսկ գործունեության ծրագրում ավելացված նոր ծրագրային կետի դեպքում՝ ծրագրային կետի ավելացման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հաշվեքննությունը սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ հաշվեքննության օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձեով տեղեկացնում է հաշվեքննության անցկացման, դրա տեսակների, ընթացակարգերի, ժամկետների, հաշվեքննվող ժամանակաշրջանի մասին:

5. Հաշվեքննության խմբի աշխատանքները ղեկավարում է հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: Հաշվեքննության առաջադրանքի մեջ չնշված անձինք չեն կարող մասնակցել հաշվեքննությանը:

6. Հաշվեքննության առաջադրանքում նշված օբյեկտում գննման եւ դիտարկման ընթացակարգի իրականացման ժամկետը սահմանվում է մինչեւ քսանչորս աշխատանքային օր, որն հաշվեքննության ընթացքում կարող է երկարաձգվել ոչ ավելի քան տասներկու աշխատանքային օրով՝ հաշվեքննիչ պալատի որոշմամբ:

7. Սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունների կատարման անհնարինության, ինչպես նաեւ հաշվեքննության ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ հաշվեքննությանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության մարմինների կամ դատարանի որոշման հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ հաշվեքննության իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի դեպքում հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաշվեքննությունը կասեցվում է: Կասեցման հիմքերի վերացումից հետո հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաշվեքննությունը կարող է վերսկսվել մնացած ժամկետով:

Հողված 35. Հաշվեքննության արձանագրությունը

1 Հաշվեքննողը արձանագրում է հաշվեքննության արդյունքները, դրա վերաբերյալ կազմում եւ իր ստորագրությամբ հաստատում է հաշվեքննության արձանագրությունը: Հաշվեքննության արձանագրությունը ստորագրած հաշվեքննողը պատասխանատվություն է կրում դրանում արձանագրված տեղեկատվության արժանահավատության եւ ամբողջականության համար:

2. Հաշվեքննության արձանագրությունն ըստ անհրաժեշտության ներառում է՝

1) գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին.

2) գրառումներ՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ.

3) այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

3. Ծանոթացման եւ ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվում է հաշվեքննության կամ ստուգման առաջադրանքում նշված համապատասխան հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող տաս օրվա ընթացքում, համաձայնության դեպքում, ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ եւ բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաեւ այլ տեղեկատվության վերաբերյալ, որոնք կցվում են հաշվեքննության արձանագրությանը:

4. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը հաշվեքննության արդյունքում կազմված հաշվեքննության արձանագրությունը եւ դրա վերաբերյալ առարկությունները եւ բացատրությունները ներկայացնում է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը համակարգող հաշվեքննիչ պալատի անդամին:

5. Հաշվեքննության ընթացքում կազմվող հաշվեքննության արձանագրությունները հանդիսանում են ընթացիկ եզրակացության հիմք:

Հոդված 36. Հաշվեքննողի լիազորությունները

1. Հաշվեքննողը իրավասու է տվյալ ծրագրային կետի շրջանակներում՝

1) իրականացնել հաշվեքննություն

2) հաշվեքննության օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն, փաստաթղթեր, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հաշվապահական հաշվետվություններ,՝ դրանցից դուրս գրել տեղեկություններ եւ ստանալ պարզաբանումներ: Օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ տվյալ գաղտնիքի համար օրենքով սահմանված դեպքում եւ կարգով.

3) հաշվեքննության ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ հաշվեքննվող օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից ստանալ գրավոր, բանավոր բացատրություններ.

4) մուտք գործել հաշվեքննության օբյեկտի տարածքներ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

5) անհրաժեշտության դեպքում հաշվեքննության գործընթացին ներգրավել հաշվեքննության օբյեկտի մասնագետներին՝ հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ.

2. Հաշվեքննողը պարտավոր չէ բացատրություններ տալ հաշվեքննության ընթացքի վերաբերյալ, բացառությամբ՝ հաշվեքննության վերաբերյալ հանձնարարություններ տալու իրավասություն ունեցող անձանց պահանջի դեպքում:

3. Հաշվեքննիչ պալատը իրավասու է հաշվեքննվող օբյեկտից պահանջել եւ ստանալ հաշվեքննության առարկայի շրջանակներում կնքված պայմանագիրը ինչպես նաեւ դրանցից բխող այն փաստաթղթերը, որը պայմանագրի կամ գործարքի մյուս կողմը պարտավոր է տրամադրել հաշվեքննվող օբյեկտին:

4. Հաշվեքննողը պարտավոր է՝

1) հաշվեքննությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ հաշվեքննության օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին ներկայացնել հաշվեքննության առաջադրանքը.

2) անաչառ եւ համակողմանի հավաքագրել եւ արձանագրել հաշվեքննության առարկային առնչվող տեղեկությունները եւ փաստերը.

3) իրականացնել հաշվեքննության գործընթացի փաստաթղթավորում.

4) չխոչընդոտել հաշվեքննության օբյեկտի բնականոն աշխատանքին.

5) հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց ծանոթացնել հաշվեքննությանն առնչվող իրենց իրավունքներին ու պարտականություններին.

6) հաշվեքննության օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին ծանոթացնել հաշվեքննության արդյունքներին.

7) հաշվեքննության ընթացքում հանցագործության ակնհայտ հատկանիշների կասկածի ի հայտ գալու պարագայում անհապաղ տեղեկացնել հաշվեքննիչ պալատ:

Հոդված 37. Մասնագետները եւ փորձագետը

1. Հաշվեքննիչ պալատն իրավասու է օրենքով սահմանված կարգով պայմանագրային հիմունքներով հաշվեքննության գործընթացում ներգրավել հաշվեքննության վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող փորձագետ կամ համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետ:

2. Մասնագետը կամ փորձագետը իրավասու է հաշվեքննության ընթացքում իրականացնել սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով սահմանված իրավունքները եւ պետք է կրի 4-րդ մասով սահմանված պարտականությունները:

Հոդված 38. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները եւ պատասխանատվությունը

1. Հաշվեքննության կամ ստուգման առաջադրանքում նշված համապատասխան հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձը, իսկ իրավաբանական անձանց մոտ հաշվեքննության իրականացման դեպքում նաեւ համապատասխան ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձն իրավասու է՝

1) ծանոթանալու հաշվեքննության արձանագրությանը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու հաշվեքննողների գործողությունները:

2. Հաշվեքննության օբյեկտի ղեկավարը իրավասու է հաշվեքննության արձանագրության վերաբերյալ սույն օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում եւ կարգով ներկայացնել առարկություններ եւ բացատրություններ:

3. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծել հաշվեքննողների գործունեության համար:

2) հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա եւ հասանելի ամբողջական եւ ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր եւ գրանցումներ,

3) հաշվեքննության ընթացքում անհապաղ տեղեկացնել հաշվեքննողին տրամադրված տեղեկատվության, փաստաթղթերի եւ գրանցումների ցանկացած փոփոխության եւ լրացումների մասին:

4) չխոչընդոտել հաշվեքննության ընթացքին, կատարել հաշվեքննողների օրինական պահանջները.

4. Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման եւ ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն :

5. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների՝ հաշվեքննությանը վերաբերող օրինական պահանջները պարտադիր են հաշվեքննության օբյեկտի ղեկավար եւ այլ պաշտոնատար անձանց համար:

Հոդված 39. Հաշվեքննողների եւ հաշվեքննիչ պալատի գործողությունների բողոքարկումը

1. Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք կարող են բողոքարկել հաշվեքննիչ պալատի եւ հաշվեքննիչ պալատի ծառայողների գործողությունները դատական կարգով:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 40. Հաշվեքննիչ պալատի համագործակցությունը այլ մարմինների հետ

1. Հաշվեքննության իրականացման համար հաշվեքննիչ պալտը կարող է օգտագործել հաշվեքննվող օբյեկտի ներքին աուդիտի արդյունքները: Այդ նպատակով հաշվեքննիչ պալատը ուսումնասիրում է հաշվեքննվող օբյեկտի ներքին աուդիտի համակարգի արդյունավետություն եւ ներկայացնում է առաջարկություններ դրա բարելավման համար:

2. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանումների կարողությունների զարգացման եւ գործնական խնդիրների լուծման հարցում համագործակցում են հաշվեքննիչ պալատի հետ:

3. Հաշվեքննիչ պալատի հարցման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները տրամադրում են տեղեկատվություն իրենց կողմից հաշվեքննության օբյեկտի կամ հաշվեքննության առարկայի՝ հաշվեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանի վերաբերյալ իրականացրած վերահսկողության, հսկողության, ստուգումների, ներքին աուդիտի արդյունքների մասին կամ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննությանը վերաբերվող պահանջված այլ տեղեկատվություն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հոդված 41. Հաշվեքննիչ պալատի ակտերը Ազգային ժողով ներկայացնելը

1. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները Ազգային ժողով են ներկայացվում սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերով սահմանված ժամկետներում եւ կարգով:

2. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը Ազգային ժողով է ներկայացվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում եւ կարգով:

3. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը Ազգային ժողովում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տարեկան կատարողականի քննարկման ընթացքում:

4. Հաշվեքննիչ պալատը իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում եւ կարգով:

5. Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդումը քննարկվում է Ազգային ժողովում՝ առանց որոշում ընդունելու:

ԳԼՈՒԽ 7

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

Հոդված 42. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայողի կողմից սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված

կարգով ու իր իրավասության սահմաններում հաշվեքննիչ պալատի գործառույթներն իրականացնելու նպատակով հաշվեքննիչ պալատի աշխատակազմում կազմակերպվող մասնագիտական գործունեություն է:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը իրականացվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներում, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում՝ «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան», իսկ քաղաքացիական ծառայությունը՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումներում՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությանը վերաբերող սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Հաշվեքննիչ պալատում քաղաքացիական ծառայությանը վերաբերող սույն օրենքով չկարգավորված խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 43. Հաշվեքննիչ պալատի անդամների եւ պալատի աշխատակազմի ծառայողների վարձատրությունը

1. Հաշվեքննիչ պալատի անդամների, պալատի աշխատակազմի ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական եւ լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների եւ չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԳԼՈՒԿ 8

ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 44. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն օրենքը:

3. Հաշվեքննիչ պալատի գործունեության առաջին ծրագիրը, կանոնակարգը, աշխատակազմի կանոնադրությունը, հաստիքացուցակը, պաշտոնի անձնագրերը ենթակա են հաստատման հաշվեքննիչ պալատի կողմից՝ սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվեքննիչ պալատի անդամին եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմում գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց վերաբերվող աուդիտորի որակավորման դրույթն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, իսկ հաշվեքննիչ պալատում աշխատանքային ստաժի ժամանակահատվածը ընդգրկում է նաեւ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատում աշխատելու ժամանակահատվածը:

5. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին վերաբերվող աուդիտորի որակավորման դրույթն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, իսկ հաշվեքննիչ պալատում աշխատանքային ստաժի ժամանակահատվածը ընդգրկում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատում աշխատելու ժամանակահատվածը :

Հոդված 45. Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի Սահմանադրության փոփոխություններով եւ օրենքով սահմանված ժամկետի ավարտը որպես հաշվեքննիչ պալատի անդամներ:

Հոդված 46. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի քաղաքացիական ծառայողներին հաշվեքննիչ պալատի ծառայողներ համարելը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողները համարվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներ, իսկ այլ կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատող քաղաքացիական ծառայողները՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներ:

Հոդված 47. Հաշվեքննիչ պալատի իրավահաջորդությունը

1. Հաշվեքննիչ պալատը հանդիսանում է վերահսկիչ պալատի իրավահաջորդը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվեքննիչ պալատն առաջին տարում իրագործում է Ազգային ժողովի արդեն ընդունած Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեության տարեկան ծրագիրը, իսկ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը սույն օրենքով սահմանված կարգով Ազգային ժողով է ներկայացնում հաշվեքննիչ պալատը:

3. Հաշվեքննիչ պալատի տարեկան առաջին հաղորդումն իր մեջ պարունակում է Վերահսկիչ պալատի վերջին տարեկան գործունեության ծրագրով նախատեսված ծրագրային հարցերով սահմանված վերահսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմում (այսուհետ՝ Հաշվեքննիչ պալատի աշխատակազմ) ծառայության պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայության անցնելու կարգը եւ պայմանները, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների վրա:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը պետական ծառայության տեսակ է:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով ապահովում է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին (այսուհետ՝ հաշվեքննիչ պալատ) վերապահված լիազորությունների լիարժեք եւ արդյունավետ իրականացումն եւ քաղաքացիական իրավական հարաբերություններին նրանց մասնակցությունը:

Հոդված 4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայությունը կարգավորող իրավական ակտերը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության հետ կապված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների միջեւ ծառայողական հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի որոշումներով:

3. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համարվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի աշխատողներ, եւ նրանց հետ կապված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 5. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի գործառույթները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը՝

1) իրականացնում է կադրային քաղաքականությունը, ֆինանսաբյուջետային եւ նյութատեխնիկական եւ այլ բնույթի միջոցառումներ՝ ուղղված հաշվեքննիչ պալատի գործունեության համար պայմանների ստեղծմանը.

- 2) իր կազմում գործող հաշվեքննություն իրականացնող եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, օրենքով սահմանված կարգով իրականացնում է հաշվեքննություն:
- 3) նախապատրաստում է հաշվեքննիչ պալատի նիստերը,
- 4) վերլուծում եւ ամփոփում է հաշվեքննության արդյունքները,
- 5) կազմակերպում է հաշվեքննիչ պալատի ինտերնետային կայքի աշխատանքները.
- 6) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությամբ, հաշվեքննիչ պալատի որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 6. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում գործում են հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:
2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում գործող կառուցվածքային ստորաբաժանումները կազմված են վարչություններից եւ բաժիններից:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 7. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կառավարման մարմինները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կառավարման մարմինը հաշվեքննիչ պալատն է:
2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կառավարման առանձին գործառույթներ իրականացնում է հաշվեքննիչ պալատի նախագահը:

Հոդված 8. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ղեկավարման մարմինը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ղեկավար մարմինը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարն է, որն ապահովում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության իրականացումը:
2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայող է, որը նշանակվում է վեց տարի ժամկետով:
3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությամբ, հաշվեքննիչ պալատի որոշումներով եւ այլ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հոդված 9. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնը սույն օրենքով սահմանված կարգով հաստատված պաշտոնների անվանացանկով նախատեսված հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնն է:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաեւ գիտելիքների եւ հմտությունների անհրաժեշտ մակարդակից:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում պաշտոնները դասակարգվում են հետեւյալ խմբերի.

1) հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության բարձրագույն պաշտոններ.

2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության գլխավոր պաշտոններ.

3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության առաջատար պաշտոններ.

4) հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության կրտսեր պաշտոններ:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության բարձրագույն պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին եւ 2-րդ ենթախմբերի, իսկ հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության գլխավոր, առաջատար եւ կրտսեր պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթախմբերի: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

Հոդված 10. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության դասային աստիճանները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին շնորհվում են հետեւյալ դասային աստիճանները.

1) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող հաշվեքննիչ պալատի ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճաններ.

2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններ, ինչպես նաեւ 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճան.

3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճաններ, ինչպես նաեւ 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

4) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ, ինչպես նաեւ 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության բարձրագույն խորհրդականի դասային աստիճանները շնորհում, դասային աստիճանն իջեցնում, ինչպես նաեւ դասային աստիճանից զրկում է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ հաշվեքննիչ պալատ)՝ հաշվեքննիչ պալատի նախագահի ներկայացմամբ:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի խորհրդականի դասային

աստիճանները շնորհում, դասային աստիճանն իջեցնում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահը՝ սույն օրենքով սահմանված դեպքերում:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առաջատար եւ կրտսեր ծառայողի դասային աստիճանները շնորհում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը (այսուհետ՝ աշխատակազմի ղեկավարը)՝ սույն օրենքով սահմանված դեպքերում:

5. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին շնորհվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության համապատասխան դասային աստիճան, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճանի, եթե նա չունի հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կամ պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճան: Տվյալ դեպքում անձը պահպանում է իր ավելի բարձր դասային աստիճանը:

5. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով սահմանված կարգով կատարողականի գնահատման արդյունքում:

6. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձին հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո:

7. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների դասային աստիճանները պահպանվում են աշխատանքից ազատվելիս, պետական ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելիս:

8. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության դասային աստիճանն իջեցվում է դատական կարգով՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ որպես կարգապահական տույժի տեսակ, բացառությամբ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության 1-ին եւ 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճանների:

Հոդված 11. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի անձնագրերը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի անձնագիրը փաստաթուղթ է, որը սահմանում է այդ պաշտոնը զբաղեցնող ծառայողի գործառույթները, նրա պաշտոնական իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու ներկայացուցչությունը, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու աշխատանքային հմտությունների, ինչպես նաև հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության համապատասխան փորձի պահանջները:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է հաշվեքննիչ պալատը: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անձնագրերի նկարագրերի ներկայացման պարտականությունը կրում է աշխատակազմի ղեկավարը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության բարձրագույն պաշտոնների անձնագրերը ներառում են առնվազն հետևյալ պահանջները.

1) բարձրագույն կրթություն.

2) աուդիտորի որակավորում.

3) առնվազն հինգ տարվա աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կամ դրանց հավասարեցված ստորաբաժանման գլխավոր պաշտոնների աշխատանքային ստաժ.

4) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության գլխավոր պաշտոնների անձնագրերը ներառում են հետեւյալ պահանջները.

1) բարձրագույն կրթություն.

2) աուդիտորի որակավորում.

3) առնվազն չորս տարվա աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կամ դրանց հավասարեցված ստորաբաժանման առաջատար պաշտոնների աշխատանքային ստաժ.

4) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

5. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առաջատար պաշտոնների անձնագրերը ներառում են առնվազն հետեւյալ պահանջները.

1) բարձրագույն կրթություն.

2) աուդիտորի որակավորում.

3) առնվազն երեք տարվա աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կամ դրանց հավասարեցված ստորաբաժանման կրտսեր պաշտոնների աշխատանքային ստաժ.

4) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

6. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կրտսեր պաշտոնների անձնագրերը ներառում են առնվազն հետեւյալ պահանջները.

1) բարձրագույն կրթություն.

2) աուդիտորի որակավորում:

7. Յուրաքանչյուր ստորադաս խմբում հաշվեքննիչ չպալատի աշխատակազմի ծառայության անցնելու համար բավարար է ավելի բարձր խմբի համար սահմանված պահանջները բավարարելը:

8. Մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անձնագրերը ներառում են նաեւ աշխատանքային ստաժի հետեւյալ չափանիշները.

1) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության բարձրագույն պաշտոններ՝ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության գլխավոր պաշտոններ՝ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ

3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առաջատար պաշտոններ՝ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Հոդված 12. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անվանացանկը եւ հաստիքացուցակը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնները սահմանվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնների սպառիչ ցանկով՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի պաշտոնների անվանացանկով:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնների անվանացանկը եւ հաստիքների քանակը հաստատում եւ փոփոխում է հաշվեքննիչ պալատը: Բյուջետային տարվա ընթացքում հաշվեքննիչ պալատի աշխատակազմի պաշտոնների անվանացանկի եւ հաստիքների

քանակի փոփոխությունները կատարվում են տվյալ տարվա բյուջետային միջոցների շրջանակում: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անվանացանկի եւ հաստիքների քանակի ներկայացման պարտականությունը կրում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքացուցակները հաստատում է (փոփոխում է) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը՝ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների անվանացանկը հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Հաստիքացուցակը ներառում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների հաստիքները, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքները եւ վարձատրության չափը:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 13. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք

1. Սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, 18 տարին լրացած, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հոդված 14. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձինք

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

- 1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) դատական կարգով զրկվել են պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
- 3) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը.
- 4) դատապարտվել են հանցագործության համար, եւ հացագործությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
- 5) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

2. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է հաշվեքննիչ պալատը:

Հոդված 15. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի նշանակումը եւ ազատումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոններում նշանակումներ կատարվում են սույն օրենքով սահմանված կարգով:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնում նշանակված անձինք օրենքով նախատեսված՝ պաշտոնից ազատման հիմքերի բացակայության դեպքում անփոփոխելի են:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է՝

1) հաշվեքննիչ պալատի բարձրագույն խմբի պաշտոններում՝ հաշվեքննիչ պալատը՝ հաշվեքննիչ պալատի նախագահի ներկայացմամբ.

2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի գլխավոր խմբի պաշտոններում՝ հաշվեքննիչ պալատի նախագահը.

3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առաջատար եւ կրտսեր խմբի պաշտոններում՝ աշխատակազմի ղեկավարը՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ.

4. Առաջին անգամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչեւ վեց ամիս փորձաշրջանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 16. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոնն զբաղեցվում է արտամրցությային կարգով կամ մրցույթով:

Հոդված 17. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոնն արտամրցությային կարգով զբաղեցնելու դեպքերը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի թափուր պաշտոնն առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, մինչեւ տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակել հաշվեքննիչ պալատի աշխատակազմի այն ծառայողին, ով միաժամանակ՝

ա) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

բ) համարվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության միեւնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության իր զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի, իսկ բարձրագույն պաշտոնների խմբի դեպքում՝ 2-րդ ենթախմբի պաշտոն.

գ) համարվում է կոնկրետ կառուցվածքային ստորաբաժանման հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայող.

դ) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

2. Մինչեւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ եւ հաշվեքննիչ պալատի համաձայնությամբ այդ պաշտոնը կարող է արտամրցությային կարգով զբաղեցնել միայն հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձը:

Հոդված 18. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Սույն օրենքով սահմանված արտամրցությային կարգով նշանակում չկատարելու, ինչպես նաեւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոնն առաջանալու եւ սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում նշանակում չկատարելու դեպքերում հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում այդ պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին (այսուհետ՝ մրցույթ):

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև հաշվեքննիչ պալատի աշխատակազմի պաշտոնական ինտերնետ կայքում: Նշված հայտարարությունը պետք է հրապարակվի այնպես, որ ապահովվի այդ մրցույթին տեղեկանալու եւ դրան մասնակցելու ողջամիտ հնարավորությունը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներն անցկացնում են սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված մրցութային հանձնաժողովները, իսկ անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն ու մրցութային հանձնաժողովների գործունեության կազմակերպական ապահովումն իրականացնում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմը:

4. Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե նա չի բավարարում սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

5. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ անձ:

6. Մրցույթն անցկացվում է թեստավորման եւ հարցազրույցի փուլերով:

7. Մրցույթի կազմակերպման եւ անցկացման, հարցաշարերի կազմման մրցութային հանձնաժողովների ձեւավորման կարգը, ինչպես նաև դրանց աշխատակարգը սահմանվում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ:

Հոդված 19. Մրցույթի արդյունքների հրապարակումը, կրկնակի մրցույթը

1. Մրցույթի արդյունքները տրամադրվում են մրցույթի մասնակիցներին կամ հանրային ծանոթացման համար փակցվում են հաշվեքննիչ պալատի վարչական շենքում՝ մատչելի վայրում:

2. Կրկնակի մրցույթ անցկացվում է, երբ՝

1) մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման փուլում չի հավաքում անհրաժեշտ միավորների նվազագույն քանակը.

2) մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել.

3) ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն օրենքի 18-րդ հոդվածի չորրորդ մասով սահմանված հիմքերից որեւէ մեկը.

4) դիմում տված քաղաքացիներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին.

5) մրցույթն անցկացվել է սույն օրենքի եւ հաշվեքննիչ պալատի սահմանած կարգի էական խախտմամբ.

6) մրցույթը դատական կարգով ճանաչվել է անվավեր:

3. Կրկնակի մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մրցույթը համարվում է չկայացած: Չկայացած մրցույթի արդյունքում պաշտոնի նշանակված անձը ենթակա է ազատման:

5. Եթե կրկնակի մրցույթը համարվում է չկայացած, կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության տվյալ թափուր պաշտոնը համարվում է կադրերի ռեզերվում գտնվող անձանցից՝ հարցազրույցով, ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքման միջոցով:

6. Կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում նոր մրցույթը հայտարարվում է 2 ամիս հետո:

7. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողները, ինչպես նաև կադրերի ռեզերվում ընդգրկված անձինք կարող են մասնակցել ընդհանուր հիմունքներով:

Հոդված 20. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ստաժը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ստաժը ներառում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու ողջ ժամանակահատվածը, ինչպես նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոններին համարժեք պաշտոններում աշխատած ողջ ժամանակահատվածը:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ստաժը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի ընդհանուր, մասնագիտական աշխատանքային ստաժում եւ պետական ծառայության ստաժում:

Հոդված 21. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների ուսման կամ վերապատրաստման համար տրամադրվող արձակուրդները

1. Մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին կարող է տրամադրվել ուսումնական արձակուրդ:

2. Նման արձակուրդի դեպքում պահպանվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի՝

1) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնը եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ստաժը, վերապատրաստման դեպքում՝ վարձատրությունը, մինչև մեկ տարի ժամկետով գործուղման դեպքում՝ հաշվեքննիչ պալատի նախագահի թույլտվությամբ՝ նաև վարձատրությունը.

2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնը եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության ստաժը, մեկ տարուց ավելի ժամկետով գործուղման դեպքում՝ հաշվեքննիչ պալատի նախագահի թույլտվությամբ:

Հոդված 22. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին փոխարինելը եւ նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնը ժամանակավորապես թափուր մնալու դեպքում այդ պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը, իսկ վերջինիս բացակայության դեպքում նշանակումը կատարվում է մինչև երեք ամիս ժամկետով կադրերի ռեզերվում ընդգրկված այն անձանց թվից, ովքեր համապատասխանում են տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին:

2. Երեք ամսից ավելի ժամկետով պաշտոնը թափուր մնալու դեպքում այն համարվում է տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին համապատասխանող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով:

3. Ժամկետային աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի ծառայության ներկայանալու օրը:

ԳԼՈՒԽ 5

**ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ,
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ**

Հոդված 23. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականի գնահատումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականի գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակ իր անմիջական ղեկավարի կողմից՝ կազմված՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կիսամյակային կատարողականի (այսուհետ՝ կատարողական) հիման վրա:
3. Կատարողականի գնահատման կարգը, չափանիշները եւ ձեւը սահմանում է հաշվեքննիչ պալատը:
4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների կատարողականի գնահատման չափանիշները միասնական են բոլոր հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների համար: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների կատարողականի գնահատումը պետք է լինի օբյեկտիվ, հստակ եւ սպառիչ գնահատական տա հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի պաշտոնին առաջադրվող բոլոր պահանջների կատարման վերաբերյալ:

Հոդված 24. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականը կազմվում էւ համապատասխանաբար հաշվեքննիչ պալատի նախագահին կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարին է ներկայացվում հաշվեքննիչ պալատի սահմանած ժամկետում:
2. Մինչեւ սույն հոդվածի առաջին մասի պահանջը կատարելը համապատասխան պաշտոնատար անձը գնահատված կատարողականի օրինակը տրամադրում է գնահատվող ծառայողին:
3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողն իրավունք ունի գնահատված կատարողականի օրինակը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գրավոր ընդունելու կատարողականը կամ առարկելու դրան: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կողմից գրավոր առարկություն չներկայացնելը դիտվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի համաձայնություն իր կատարողականի գնահատմանը:
4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականը պետք է պարունակի հետեւյալ եզրակացություններից մեկը.
 - 1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.
 - 2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:
5. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու մասին եզրակացություն տալիս համապատասխան պաշտոնատար անձը կարող է առաջարկություն ներկայացնել հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի խորհուրդին մասին:
6. Կատարողականի գնահատման ենթակա չեն՝
 - 1) տվյալ պաշտոնը վեց ամսից պակաս ժամկետով զբաղեցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը, բացառությամբ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելու դեպքի.
 - 2) հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողները.
 - 3) պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողները՝ վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

7. Եթե ծառայողը տարվա ընթացքում տեղափոխվել է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության այլ պաշտոնի, ապա նրա կատարողականի գնահատումն իրականացնում է այն անմիջական ղեկավարը, որի ենթակայությամբ ավելի երկար ժամանակահատված է գործել այդ աշխատողը:

8. Կատարողականի գնահատման արդյունքներով հաշվեքննիչ պալատի նախագահը կամ աշխատակազմի ղեկավարը կատարողականը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կատարողականի գնահատման հիման վրա կարող է կիրառել օրենքով նախատեսված խրախուսման որեւէ տեսակ կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին ուղարկել լրացուցիչ վերապատրաստման կամ ազատել հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին զբաղեցրած պաշտոնից: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը ազատվում է պաշտոնից, եթե վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական:

Հոդված 25. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմ ծառայողների վերապատրաստումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի յուրաքանչյուր ծառայող, առնվազն երեք տարին մեկ, մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով անցնում է վերապատրաստում:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների վերապատրաստման կարգը եւ ծրագրերը, սահմանում է հաշվեքննիչ պալատը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 26. Հաշվեքննիչ պալատի ծառայողների կադրերի ռեզերվը

1. Սույն օրենքով սահմանված կարգով անցկացված մրցույթների հաղթող ճանաչված եւ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի չնշանակված անձինք, ինչպես նաեւ սույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի եւ երկրորդ մասի հիմքով ազատված հաշվեքննիչ պալատի ծառայողներն ընդգրկվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կադրերի ռեզերվում:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը մեկ տարի է, բայց ոչ ավելի քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու եւ կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է հաշվեքննիչ պալատը՝ սույն օրենքի համաձայն:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Հոդված 27. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի հիմնական իրավունքները

1. Հաշվեքննիչ պալատի ծառայողի ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները եւ պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին եւ այլ փաստաթղթերին ծանոթանալը եւ բացատրություններ ներկայացնելը.

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ եւ նյութեր ստանալը.

4) աշխատանքի վարձատրության, առողջության պաշտպանության, անվտանգ եւ անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.

- 5) սոցիալական պաշտպանությունը եւ ապահովությունը.
 - 6) իրավական պաշտպանությունը.
 - 7) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության դասային աստիճանի սահմանված կարգով բարձրացումը.
 - 8) պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.
 - 9) մրցույթի եւ կատարողականի գնահատման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.
 - 10) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:
2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Հոդված 28. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի հիմնական պարտականությունները

1. Հաշվեքննիչ պալատի ծառայողի հիմնական պարտականություններն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջները խստիվ պահպանելը.
 - 2) մասնագիտական եւ ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ եւ բավարար գիտելիքների տիրապետելը.
 - 3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը.
 - 4) սահմանված կարգով տրված հանձնարարականները կատարելը.
 - 5) իրավական ակտով սահմանված ներքին աշխատանքային կարգապահական կանոնները պահպանելը.
 - 6) ներկայացված բոլոր փաստաթղթերն ու դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերն ուսումնասիրելը եւ սահմանված կարգով դրանց ընթացք տալը.
 - 7) ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ գաղտնիքը պահպանելը ծառայությունը դադարեցնելուց հետո:
2. Հաշվեքննիչ պալատի ծառայողը կրում է նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

Հոդված 29. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողն իրավունք չունի՝
 - ա) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական եւ ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից.
 - բ) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
 - գ) լինել երրորդ անձանց ներկայացուցիչ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որն անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

դ) իրականացնել հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի էթիկայի կանոնների խախտումներ, իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել:

ե) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար:

զ) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական եւ տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը եւ ծառայողական տեղեկատվությունը:

է) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առետրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտ:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողն իրավունք չունի հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի մոտ նա հաշվեքննություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

Հոդված 30. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների սոցիալական երաշխիքները

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի համար երաշխավորվում են՝

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ եւ անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:

2) վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ:

3) ամենամյա վճարովի արձակուրդ:

4) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը եւ դրա համար նախատեսված վարձատրությունը:

5) օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն:

6) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում:

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված նրա եւ նրա ընտանիքի անդամների

անվտանգության եւ պաշտպանության ապահովում բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.

8) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային եւ այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին ծառայողական անհրաժեշտության դեպքում հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Հոդված 31. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի սոցիալական ապահովությունը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի սոցիալական ապահովությունը, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 32. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի իրավական վիճակը աշխատակազմի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի վերակազմակերպումը կամ կառուցվածքային փոփոխությունները հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ վերակազմակերպումն ուղեկցվում է հաստիքների կրճատմամբ:

2. Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առավել բարձր դասային աստիճան ունեցող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին, այս պայմանի հավասարության դեպքում՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության առավել երկար ստաժ ունեցող հաշվեքննիչ պալատի ծառայողին, իսկ վերջին պայմանի հավասարության դեպքում՝ առավել երկար ընդհանուր աշխատանքային ստաժ ունեցող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին:

Հոդված 33. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի անձնական գործը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմը:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների անձնական գործերի վարման կարգը հաստատում է հաշվեքննիչ պալատը:

ԳԼՈՒԽ 7

**ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ,
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ**

Հոդված 34. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաեւ ծառայողական պարտականությունները եւ առանձին առաջադրանքները կատարելու համար հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները՝ դասային աստիճանի բարձրացում եւ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված խրախուսանքի այլ տեսակներ: Ընդ որում, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ որպես խրախուսանքի տեսակ դրամական պարգեատրումը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ խրախուսանքի տեսակները կիրառում են՝

1) դասային աստիճանի բարձրացման դեպքում՝ դասային աստիճան շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք:

2) մյուս դեպքերում՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք:

Հոդված 35. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի էթիկայի կանոնները խախտելու դեպքերում, հաշվեքննիչ պալատի ծառայողի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգապահական տույժերը, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված տույժերը:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողից:

Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը:

Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:

Կարգապահական տույժի մասին հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց ետոյա ժամկետում:

Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

Եթե հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում եւ դրսևտրել է իրեն որպես բարեխիղճ ծառայող:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ տույժերի տեսակները կիրառում են պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության խորհրդի սահմանած կարգով եւ դեպքերում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

5. Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև մեկ ամիս ժամկետով կարող է կասեցվել՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի վարձատրության պահպանմամբ:

6. Ծառայողական քննության արդյունքում հաշվեքննիչ պալատի կողմից ընդունված որոշումները ունեն պարտադիր բնույթ:

Հոդված 36. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը

1. Ի թիվս Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերի՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

- 1) կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.
- 2) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի էթիկայի կանոնի կոպիտ խախտումը.
- 3) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականի գնահատման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին եզրակացությունը.
- 4) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության տվյալ պաշտոնի վերացումը (կրճատումը).
- 5) քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.
- 6) սույն օրենքի պահանջների խախտմամբ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի նշանակվելը.
- 7) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունենալը կամ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելը.
- 8) դատական կարգով անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելը.
- 9) դատական կարգով պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.
- 10) օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով ազատազրկման դատապարտվելը.
- 11) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը:

3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կապակցությամբ:

4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի կատարողականի գնահատման, երկարատև անաշխատունակության, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնի վերացման (կրճատման) հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվել չեն կարող հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխա խնամող, պարտադիր զինվորական ծառայություն անցնող հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողները:

Հոդված 37. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:
2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահի ներկայացմամբ՝ հաշվեքննիչ պալատի որոշմամբ, հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողը կարող է մինչեւ հինգ տարի ժամկետով շարունակել պաշտոնավարումը:

Հոդված 38. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու կամ պաշտոնից ազատելու որոշումը դատական կարգով բողոքարկելը

1. Հաշվեքննիչ պալատի ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ հաշվեքննիչ պալատի ծառայության պաշտոնից ազատելու մասին որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:
2. Հաշվեքննիչ պալատի ծառայության պաշտոնից ազատելու մասին իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում հաշվեքննիչ պալատի ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում

դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, եւ հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափով:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում:

2. Աշխատանքի վարձատրության հաշվարկման համար հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության դասային աստիճանները հավասար են քաղաքացիական ծառայության համար նախատեսված դասային աստիճաններին:

Հոդված 40. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ստեղծումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը ենթակա է ստեղծման, սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ստեղծման պահից դադարում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմի գործունեությունը:

Հոդված 41. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների առաջին վերապատրաստումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների առաջին վերապատրաստումն անցկացվում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երրորդ ամսվա առաջին աշխատանքային օրվանից:

Հոդված 42. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների առաջին կատարողականի գնահատումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների առաջին կատարողականի գնահատումը անցկացվում է վերապատրաստումից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հոդված 43. Ժամկետային աշխատանքային պայմանագրերի լուծումը

1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող ժամկետային աշխատանքային պայմանագրերով աշխատողների հետ կնքված պայմանագրերը համարվում են լուծված սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ ամսվա առաջին աշխատանքային օրվանից՝ եթե այդ պայմանագրերով դրանց լուծման ավելի վաղ ժամկետներ նախատեսված չեն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150²-17.01.2017-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 6-րդ հոդվածի 26.1-րդ կետում «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահը եւ խորհրդի անդամները» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահը եւ անդամները» բառերով:

Հողված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150³-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

1) պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.

2) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն:»:

Հողված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁴-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հողված 2. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հողված 17. Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը

1. Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, որը ներառում է՝

1) միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հաստատած ֆինանսական հաշվետվությունը.

2) Կենտրոնական բանկի կառավարման վերաբերյալ դրույթները»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁵-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-211 օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասի ե) ենթակետում «Ազգային ժողովի վերահսկիչ պալատ» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁶-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի նախագահը եւ անդամները», բառերով, իսկ 18-րդ կետում «վերահսկիչ պալատի անդամների համար՝ վերահսկիչ պալատի նախագահը» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի անդամների համար՝ հաշվեքննիչ պալատի նախագահը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁷-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՌՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել 2-րդ պարբերությամբ հետեւյալ խմբագրությամբ՝

«Պետական (հանրային) հատվածում աուդիտը կոչվում է հաշվեքննություն եւ կարգավորվում է Հաշվեքննիչ պալատի մասին օրենքով»:

Հողված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁸-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետում «վերահսկիչ պալատի նախագահը եւ խորհրդի անդամները» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի նախագահը եւ անդամները» բառերով:

Հողված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁹-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասում «վերահսկիչ» բառը փոխարինել «հաշվեքննիչ» բառով:

Հողված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Պ-1150¹⁰-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի հավելված 1-ում՝

1) «Վերահսկիչ պալատի նախագահ» բառերը փոխարինել «Հաշվեքննիչ պալատի նախագահ» բառերով:

2) «Վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ» տողը հանել:

3) «Վերահսկիչ պալատի խորհրդի անդամներ» բառերը փոխարինել «Հաշվեքննիչ պալատի անդամներ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150¹¹-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածում «Ազգային ժողովի վերահսկիչ պալատի» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150¹²-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից

իրականացվող վերահսկողության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության » բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150³-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-377 օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում «վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի իրականացրած հաշվեքննության» բառերով:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետում «վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության» բառերը փոխարինել «հաշվեքննիչ պալատի իրականացրած հաշվեքննության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 95-րդ հոդվածը 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«7. Համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, համայնքի սեփականության օգտագործման օրինականության եւ արդյունավետության նկատմամբ հաշվեքննություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:»

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1150⁴-17.01.2017-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 81-րդ հոդվածի 3-րդ մասում «Վերահսկիչ պալատի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 210-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հաշվեքննիչ պալատի մասին» «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» օրենքների, Քրեական Դատավարության Օրենսգրքում, «Ազգային ժողովի կանոնակարգ», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային ծառայության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է

- 2015 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում կատարված փոփոխություններով, որի գլուխ 13-ը նվիրված է Հաշվեքննիչ պալատին:
 - Վերահսկողությունից հաշվեքննության անցում կատարելու նպատակով, այն է վերահսկիչ գործառույթ իրականացնող մարմնից անցնել հաշվեքննիչ գործառույթ իրականացնողի:
 - Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համահունչ բարձրագույն աուդիտորական մարմին ունենալու նպատակով:
- Վերահսկիչ պալատի մասին օրենքում շտկման կարիք ունեցող որոշ դրույթներ բերված են ստորեւ՝
- Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:
 - Վերահսկիչ պալատը եզրակացություն է տրամադրում պետական բյուջեի կատարողականի տարեկան հաշվետվության վերաբերյալ: Ստացվում է, որ Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում ոչ թե բյուջեի փաստացի կատարողականի այլ միայն բյուջեի կատարողականի վերաբերյալ կառավարության ներկայացված հաշվետվության նկատմամբ :

- Վերահսկիչ պալատի աշխատակիցների քաղաքացիական ծառայող լինելը հակասում է Լիմայի հռչակագրով սահմանված սկզբունքներին, քանի որ քաղաքացիական ծառայությունը կարգավորող մարմինը հանդիսանում է վերահսկողության սուբյեկտ:
- Բացակայում են Վերահսկիչ պալատի խորհրդի եւ աշխատակազմի մասնագիտական կարողություններին առաջադրվող պահանջները:
- Վերահսկիչ պալատի խորհրդի անդամի համար սահմանված չեն քաղաքական չեզոքության եւ զսպվածության պահանջները:
- սահմանված չէ վերահսկիչ պալատի գործունեության նպատակը եւ կարելի է ենթադրել, որ այն զուտ ստուգումներ իրականացնելն է:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի համաձայն Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակ է սահմանվում հանրային ֆինանսների եւ սեփականության ոլորտում պետական եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների եւ վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման օրինականության եւ արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին եւ հանրությանը ժամանակին, մասնագիտական եւ անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելը:

Նախագծի 2-րդ գլխում սահմանվում են Հաշվեքննիչ պալատի գործունեության սկզբունքները, որոնք բխում են ինչպես նոր Սահմանադրության նորմերից, այնպես էլ INTOSAI հռչակած ստանդարտներից:

Համաձայն օրենքի նախագծի արտաքին պետական հաշվեքննությունը սահմանվում է որպես հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշների եւ պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է հաշվեքննության առարկայի իրականացման համար իրավական ակտերով, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո:

Այսինքն, հաշվեքննությունը որոշակի իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատումն է, եւ այդ գնահատումը կարելի է իրականացնել միայն որոշակի որոշակի իրավական ակտերով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո:

Հաշվեքննիչ պալատը գործում է իր հաստատած գործունեության ծրագրի հիման վրա, ինչն էլ Հաշվեքննիչ պալատի համար ապահովում է առավել անկախ լինելու հնարավորությունը:

Գործունեության ծրագիրը պետք է կազմվի Հաշվեքննիչ պալատի կողմից կազմված ռիսկերի գնահատման մեթոդաբանության հիման վրա, որն ավելի արդյունավետ եւ նպատակային կդարձնի կատարվող աշխատանքները:

Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով պետք է ներկայացնի՝

- 1) տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ.
- 2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն
- 3) օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ:

Օրենքի նախագծի համաձայն հաշվեքննության սուբյեկտներ են հանդիսանում պետական բյուջեի եւ համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ եւ հիմնարկներ;

Հաշվեքննիչ պալատը իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարելու իրավունք ունի, միայն օրենքով սահմանված դեպքերում, այն է՝

1) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից.

2) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի հիսուն եւ ավելի տոկոսը պետական կամ համայնքային մասնակցությամբ է .

3) իրավաբանական անձին իրավական ակտով, պայմանագրով, վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային միջոցների հաշվին՝ միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի, պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար,

4) իրավաբանական անձը պայմանագրով ստացել է պետական բյուջեից վարկեր, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետական երաշխիքով ապահովված վարկեր կամ այլ ֆինանսական միջոցներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն

5) իրավաբանական անձը պայմանագրով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կողմից ստացել է դրամաշնորհներ եւ սուբսիդիաներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն

Նախագծով սահմանված են հաշվեքննության տեսակները եւ ընթացակարգերը:

Հաշվեքննիչ պալատի նախագահին եւ մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Նախագծում ներդրված է քաղաքական զսպվածության սկզբունքը, համաձայն որի Հաշվեքննիչ պալատի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

Նախագծում սահմանվել է աուդիտորի որակավորման պարտադիր պահանջ ինչպես պալատի անդամների, այնպես էլ հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումների ղեկավարների եւ տեղակալների համար:

Նախագծում նախատեսված է, որ Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող եւ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող աշխատակիցները չեն հանդիսանալու քաղաքացիական ծառայողներ, ինչը հանդիսանում է պետական կառավարման համակարգից անկախ գործելու եւս մեկ երաշխիք:

Նախագիծը համապատասխանում է Լիմայի եւ Մեխիկոյի հռչակագրերին, ինչպես նաեւ ֆինանսական վերահսկողության միջազգային նորմերին եւ ղեկավար ուղենիշներին (ISSAI), որը հավաստվում է համապատասխան միջազգային փորձագիտական եզրակացությամբ:

Նախագծի մշակման ընթացքում աշխատանքային խնդիր կողմից 4 դիմումներ են ներկայացվել ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդին, պարզելու համար օրենքի նախագծում նախատեսվող ձեակերպումների համապատասխանությունը սահմանադրության պահանջներին: Դիմումներում ներկայացված հարցադրումների վերաբերյալ Խորհրդից ստացված առաջարկությունները ներառված են նախագծում, որի վերաբերյալ առկա է Խորհրդի հավաստումը:

«Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի տրամաբանական լրացումն է «Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության մասին» օրենքը, որը կարգավորում է Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայության պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայության

AJV-07-36_2017-02-16_01d10.1d3921-17_2017-02-22_2F269

անցնելու կարգը եւ պայմանները, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի լիարժեք կիրառման համար անհրաժեշտ փոփոխություններ են իրականացվել նաեւ այլ իրավական ակտերում՝ Հայաստանի Հանրապետության Քրեական Դատավարության Օրենսգրքում, «Հայաստանի Հանրապետության քույր-չեղջիկ համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային ծառայության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում: :

3. Նախագծի մշակման մասնակցային ձեռնարկ

Նախագիծը մշակմանն օժանդակել է այդ նպատակով ստեղծված աշխատանքային խումբը (մասնակցությամբ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի, ՀՀ վերահսկիչ պալատի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ինչպես նաեւ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Հանրային ֆինանսների կառավարումը հարավային կովկասում եւ Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում ծրագրերի):

Փաթեթի մշակման ընթացքում իրականացվել է՝

- աշխատանքային խմբի ընդլայնված նիստ միջազգային մասնագետների մասնակցությամբ՝ մարտի 18-19, 2016

- առաջավոր փորձի ուսումնասիրման համար աշխատանքային խմբի ներկայացուցիչների մասնակցությամբ ուսումնական այց Էստոնիա՝ մարտի 21-24, 2016

4. Ակնկալվող արդյունքը

Ընդունման դեպքում օրենքն իրավական հենք կհանդիսանա ՀՀ բարձրագույն աուդիտորական մարմնի կողմից հանրային ֆինանսների կառավարման գործընթացում ժամանակակից պահանջների համապատասխան էական ու կառուցողական ներդրում ունենալու համար, ինչը կբարձրացնի հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունը:

Միաժամանակ ՀՀ բարձրագույն աուդիտորական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համահունչ կլինի զարգացած երկրներում, մասնավորապես, ԵՄ-ում գործող հասկացություններին եւ չափանիշներին: